Ձև 2

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Տիգրան Վանդունց, «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտոր
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վրաստան, ք. Բաթումի, Բաթումի Շոթա Ռուսթավելու անվան պետական համալսարան, 20–23 հուլիսի, 2026 թ.
   Աշխատանքային օրեր՝ 21–22 հուլիսի, 2026 թ.
3. **Հրավիրող կողմը.**
   Բաթումի Շոթա Ռուսթավելու անվան պետական համալսարան
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցել Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ DeSIRe (Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում) ծրագրի շրջանակում կայանալիք «Տարածաշրջանային իրազեկման օր-2» (RAD2) միջոցառմանը և ծրագրի կառավարման խորհրդի 6-րդ նիստին՝ ներկայացնելու Գորիսի պետական համալսարանի կողմից ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքներն ու ձեռք բերված արդյունքները, քննարկելու ծրագրի եզրափակիչ փուլի ռազմավարական և կազմակերպական հարցերը, ինչպես նաև մասնակցելու ծրագրի կայունության և հետագա համագործակցության ուղղությունների ձևավորմանը նվիրված քննարկումներին:
   Մասնակցել Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+ DeSIRe» (Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում) ծրագրի շրջանակում կայանալիք «Տարածաշրջանային իրազեկման օր-2» (RAD2) միջոցառմանը և ծրագրի կառավարման խորհրդի 6-րդ նիստին՝ ներկայացնելու Գորիսի պետական համալսարանի կողմից ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքներն ու ձեռք բերված արդյունքները, քննարկելու ծրագրի եզրափակիչ փուլի ռազմավարական և կազմակերպական հարցերը, ինչպես նաև մասնակցություն ունենալու ծրագրի կայունության ապահովման և հետագա համագործակցության ուղղությունների ձևավորմանը նվիրված քննարկումներին:
5. **Քննարկված թեմաները.**
   Գործուղման ընթացքում քննարկվել են՝
   - DeSIRe ծրագրի իրականացման ընթացքն ու հիմնական ձեռքբերումները,
   - 1-ին և 2-րդ պիլոտային վերապատրաստումների արդյունքները, ձեռքբերումներն ու բարելավման հնարավորությունները,

- մշակված ուսումնական մոդուլների և ԶԲԱԴ/MOOC-երի ներդրման արդյունքները,
- փափուկ հմտությունների լաբորատորիաների (Soft Skills Labs) բիզնես պլաններն ու ճանապարհային քարտեզները,
- ծրագրի տարածման և շահագործման (Dissemination and Exploitation) միջոցառումների արդյունքները,
- ԶԲԱԴ/MOOC-երի հիման վրա միկրոորակավորումների և հավաստագրման գործընթացը,
- ծրագրի կայունության ապահովման և արդյունքների ինստիտուցիոնալացման հարցերը,
- 2026 թվականի հոկտեմբերին նախատեսվող ծրագրի եզրափակիչ համաժողովի նախապատրաստական աշխատանքները,
- գործընկեր բուհերի միջև հետագա համագործակցության ուղղությունները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   - ✓ Մասնակցություն «Տարածաշրջանային իրազեկման օր-2» միջոցառման պաշտոնական բացմանը, աշխատանքային քննարկումներին, որոնց ընթացքում ներկայացվել են ծրագրի ընթացիկ արդյունքները, եվրոպացի փորձագետների գնահատականները, գործընկեր բուհերի փորձը, ինչպես նաև Հայաստանի և Վրաստանի բուհերում ծրագրի ներդրման ընթացքը:
   - ✓ Մասնակցություն ծրագրի կառավարման խորհրդի 6-րդ նիստի աշխատանքներին, որտեղ քննարկվել են ծրագրի եզրափակիչ փուլի հետ կապված հարցերը, աշխատանքային փաթեթների կատարման ընթացքը, ծրագրի արդյունքների ամփոփման, տարածման, կայունության ապահովման և Երևանում կայանալիք եզրափակիչ համաժողովի կազմակերպման հետ կապված խնդիրները:

Աշխատանքային հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև գործընկեր բուհերի միջև հետագա համագործակցության, փորձի փոխանակման և ծրագրի արդյունքների երկարաժամկետ կիրառման հնարավորությունները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Կառավարման խորհրդի նիստի ընթացքում ընդունվել են մի շարք որոշումներ ծրագրի ավարտական փուլում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ, մասնավորապես՝

- շարունակել ծրագրի արդյունքների տարածման և շահագործման միջոցառումները,
- ապահովել բուհերում, այդ թվում ԳՊՀ-ում հիմնված Փափուկ հմտությունների լաբորատորիաների գործունեության կայունությունը՝ բիզնես պլանի ու ճանապարհային քարտեզի հիման վրա,
- ավարտին հասցնել կրթական ծրագրերում ուսումնական մոդուլների և ԶԲԱԴ/MOOC-երի ներդրման գործընթացը,

- նախապատրաստական աշխատանքներ իրականացնել 2026 թվականի հոկտեմբերին Երևանում կայանալիք ծրագրի եզրափակիչ համաժողովի կազմապերպման ուղղությամբ,
- շարունակել գործընկեր բուհերի միջև համագործակցությունը՝ միջբուհական համաձայնագրերի կնքմամբ:

Գործուղման ընթացքում առանձին փաստաթղթեր չեն ստորագրվել:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. Առաջարկվում է.**

- ✓ Շարունակել Գորիսի պետական համալսարանում մշակված փափուկ հմտությունների մոդուլների և ԶԲԱԴ/MOOC-երի կիրառումը և ներդրումը կրթական գործընթացում (պատասխանատու՝ DeSIRe ծրագրի աշխատանքային թիմ, համապատասխան ամբիոններ, իրականացման ժամկետները՝ ծրագրի ընթացքում և հետագայում՝ շարունակական):
- ✓ Իրականացնել Փափուկ հմտությունների լաբորատորիայի բիզնես պլանով և ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումները՝ ապահովելով լաբորատորիայի երկարաժամկետ գործունեությունը (պատասխանատու՝ բուհի ղեկավարություն, ծրագրի աշխատանքային թիմ, դասընթացավարներ, իրականացման ժամկետները՝ սկսած 2027–2028 ուսումնական տարվանից):
- ✓ Ապահովել ԳՊՀ ակտիվ մասնակցությունը ծրագրի եզրափակիչ համաժողովին և ծրագրի արդյունքների տարածման միջոցառումներին (պատասխանատու՝ ծրագրի աշխատանքային թիմ):

**Ակնկալվող արդյունքները.**

Ծրագրի արդյունավետ իրականացում, վերջնարդյունքների ներկայացում և տարածում, ԳՊՀ-ում առկա կրթական ծրագրերի արդիականացում, Փափուկ հմտությունների լաբորատորիայի անխափան աշխատանքի ապահովում, միջազգային համագործակցության ամրապնդում և համալսարանի միջազգային հեղինակության բարձրացում:

**«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ**
**ՌԵԿՏՈՐ՝ ՏԻԳՐԱՆ ՎԱՆԴՈՒՆՑ**

2026-07-27 15:12:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից